

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԲՓԻԹՅ ՏՈՒԹ. ՅԵՆՈՐ ՊԵՅ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Մեր հին բժիշկներէն ամենէն շուտ մոռցուածն եւ վաղամեռը, բժիշկ Յակոբ պէյ Յովհաննէսեան, էր այն Հայերէն, որք զուակ անշան ընտանիքի, չքաւոր ու անտերունչ, բայց ի բնէ ուշիմ, հանճարեղ՝ կրցան ինքնօգնութեամբ, տոկուն աշխատութեամբ զարգանալ, եւ դարուս կէսէն սկսեալ, ըլլալ պարճանք իրենց հէգ Ազգին:

Իսկիւտարի Ազգային ճեմարանին համալուար անդրանիկ սաներէն, եւ Վ.Պոլսոյ Վայս. Բժշկական վարժարանին նախընծայ հայ շրջանաւարտներէն, Տըթթ. Յակոբ ոչ միայն իբրեւ բժիշկ կոչուած էր մեծ անձնաւորութիւն մ'ըլլալու, այլ եւ իբրեւ տաղանդաւոր նկարիչ, որով եղական դէմք մը եղած է դարուս հայ բժշկական պատմութեան մէջ:

Գժբախտաբար՝ շատ վաղ անհետացած, շատ կանուխ մոռցուած, ինչպէս ըսի, հազիւ անոր յիշատակութիւնը կը գտնենք Եւտիգուլէի Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին Պատմութեանը մէջ<sup>1</sup>, եւ հազիւ հարեւանցի տեղեկութիւն մը կրնանք ստանալ այսօր անոր մասին, Վ.Պոլսոյ հայ բժիշկներուն երիցագոյնէն՝ Վսեմ, Տըթթ. Ստեփան Փաշա Ասլանեանէ, որ վաղամեռիկ Յովհաննէսեան բժշկին դպրոցական ընկերը, բարեկամն եւ արուեստակիցն եղած է ժամանակաւ:

Բնիկ Վ. Պոլսեցի, զուակ աղքատ ծնողաց, ծնած է նա, ըստ Ստեփան Փաշայի, 1825 կամ 1826 թուականներուն, Եէնէ Գ.թ.թ. թաղը:

Ծաղիկ հասակին մէջ որք մնալով, Յակոբ իւր մանկական առաջին կրթութիւնը կը ստանայ իւր ծննդավայրին ազգային Նախակրթարանին մէջ: 1838ին կ'աշակերտի Իսկիւտարի նորահաստատ ճեմարան գիշերօթիկ վարժարանը, ընկեր եւ դասակից իրեն ունենալով Բարունակ Բութիկեան, Ստեփան Ասլանեան, Վարապետ Իւթիւճեան, Յովսէփ Պէյրան եւ ուրիշներ, որք տոհմային «Ժամանակակից Պատմութեան» մէջ խիստ կարեւոր էջեր գրուած ունին:

Քանի մը տարի ճեմարանին մէջ ուսանելէն ետեւ, դէպ ի 1842ին, երբ արդէն կայսերական բարձրագոյն հրովարտակ մը<sup>2</sup> արտօնած էր նաեւ

Քրիստոնէից աշակերտիլ Վ. Պոլսոյ զինուորական բժշկական վարժարանը, Յակոբ Յովհաննէսեան ինքն ալ կ'արձանագրուի հոն, Բարունակ Բութիկեանի, Ստեփան Ասլանեանի, Գարբրիէլ Սեւեանի, եւ Բառլատիեանի հետ:

Բժշկական վարժարանին մէջ Յովհաննէսեան շուտով կը սկսի փայլիլ, ոչ միայն բժշկական դասերուն մէջ ունենալով գովելի յառաջադիմութիւններ, այլ եւ՝ ձեռքի ճարտար յաջողակութիւններով, մանաւանդ նկարչական հիանալի աշխատութիւններով, որոնց մէջ ունի եղեր բնական ձիրք, եւ զորս ուսած է եղեր առանց առաջնորդի, բոլորովին ինքնակրթութեամբ, միայն բնութիւնը դասատու իրեն առնելով, ինչպէս կը պատմէ մեզ այսօր Ստեփան Փաշա Ասլանեան:

Յակոբ Յովհաննէսեան բժշկական վարժարանին ընթացքը կանոնաւորապէս շարունակելով, 1849ին կ'աւարտէ իւր ուսանողութիւնը, կը վկայուի Տըթթոր, եւ իբր բժիշկ զինուորական կ'ունենայ Բ.Յ. Կ.թ.թ. այսինքն՝ Գեր-հազարապետի աստիճանը:

Տըթթ. Յակոբ Յովհաննէսեանի հետ բժիշկ կը վկայուին՝ բաց ի Թուրք եւ Հելլէն աշակերտներէ, նաեւ Բարունակ Բութիկեան, Բառլատիեան, Գարբրիէլ Սեւեան Հայերը, որոնցմէ երկու տարի առաջ աւարտած էր արդէն Ստեփան Ասլանեան եւ եղած էր Վ. Պոլսոյ Վայս. Բժշկական վարժարանէն վկայեալ առաջին հայ բժիշկը<sup>1</sup>:

Յովհաննէսեանի ընկերները շուտով պաշտօնի կը կոչուին կայսերական բանակներուն եւ հիւանդանոցներուն մէջ, մինչ ինքը, իւր նկարչական տաղանդովն ու փութովն այնչափ ուշադրութիւն կը գրաւէ իր վրայ եւ այնչափ համակրելի կ'ըլլայ ամենուն, որ մասնաւոր պաշտպանութեամբ եւ Սուլթանական բարձր հրամանաւ, կը կարգի դասատու բժշկական դպրոցին:

Իբրեւ դասատու, Տըթթ. Յովհաննէսեան կ'աւանդէ եղեր բժշկական նկարչութիւնը, այսինքն՝ դիմագծութիւն, ոսկրագծութիւն, գանկագծութիւն, մարմնագծութիւն եւ այլն, որ այնչափ հարկաւոր է բժշկական արուեստիւ պարագողներուն:

1849ի վերջերն է՝ որ Յովհաննէսեան կը կոչուի այս կարեւոր պաշտօնին, զոր կը շարուն-

1 Պոլս. Ս. Փրկչ. Հիւանդանոցին Հայոց է Կ. Պոլս. Բ. Բէշեանի, 1888 էջ 50:  
2 Տես Արլաւայ՝ Արաբաբէն Զմիւռնիոյ Թիւ 41, 4 Յունիսի 1841:

1 Տես Հայաստան, Թերթ Չամուսեանի, Բ. տարի Թիւ 9-62, Կ. Պոլս, 30 օգոստոս 1847: